

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՏԵԽՆՈ ՍԻԹԻ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|--------------------|------------------------|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ՏԵԽՆՈ ՍԻԹԻ ՍՊԸ | <p>Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար կտրամադրվեն և փողոցներում կտեղադրվեն 60 /վաթսուհ/ հատ աղբաման: Աղբամանները կլինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի, ստորև ներկայացվում է լուսանկարը: Աղբամանների գույները, և այլ մանրամասներ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աղբամանները կլինեն չօգտագործված և պատրաստված լինեն նոր /չօգտագործված/ նյութերով: Աղբամանի հետ կտրամադրվի մեկ հատ պահեստային դուլ: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները կհամապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Աղբամանների տեղափոխումը և տեղադրումը կիրականացվի մասնակցի միջոցների հաշվին: Աղբամանները կտեղափոխվեն և կտեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ Աղբամանը պատրաստված կլինի մետաղական հիմքի վրա հետևյալ չափերով. Աղբամանի ընդհանուր բարձրությունը հատակից 650 մմ: Վերևի ձագարածև հատվածի վերինմասի տրամագիծը Φ 450մմ, իսկ ձագարածև հատվածի ներքևի մասի տրամագիծը Φ320 մմ, ձագարածև հատվածի բարձրությունը 150մմ: Աղբամանի ներքևի հատվածի տրամագիծը 320մմ, բարձրությունը մինչև ձագարածև հատվածը 500մմ: Վերևի ձագարածև հատվածի վերին</p> |

մասը պատրաստված է Փ16 մմ մետաղական խողովակից գլանված Փ 450 մմ տրամագծով, գլանված հատվածի ծայրերի միացումը եռակցման միջոցով է, մեկ եռակցման մասով և լավորակ մշակված: Աղբամանի պատերի 40x3 մմ մետաղական ժապավենը, առանց կտրվածքի /ամբողջական/ եռակցվում է Փ 16 մմ տրամագծով գլանված հատվածին և Փ450մմ տրամագծով ձագարածև հատվածի վերին հատվածին, միացման կետերն ու եռակցված հատվածները կլինեն լավորակ մշակված, Փ320 մմտրամագծով մասում ժապավենի հեռավորությունը մեկը մյուսից 17-18 մմ: Աղբամանի ստորին հատվածը որտեղ զոդված են 40x3մմմ ետաղական ժապավենը փաթաթված կլինի 50x3մմ մետաղական ժապավենով ինչպես նկարում: Աղբամանի կափարիչը ամրացված կլինի աղբամանին մետաղական շղթայով, իսկ աղբամանի կափարիչի անցքը Փ 150 մմ :Աղբամանի կափարիչը պատրաստված կլինի 1.8-2մմ մետաղական թիթեղից և հաստությունը ապահեվելու համար աղբամանի կափարիչի արտաքին մասով պետք է փաթաթվի 20x3մմ կամ 25x3մմ մետաղական ժապավենով, իսկ կափարիչի անցքի Փ 150 մմտրամագծով կփաթաթվի 10x10մմ մետաղական խողովակ եռակվման միջոցով: Աղբամանի մեջ տեղադրված է ցինկապատ մետաղական թիթեղից պատրաստված դուլը կպատրաստվի 0.4-0.5 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով, պատերին կլինեն անցքերՓ 10մմ, կունենա բռնակ, վերևի հատվածը` բռնակի ամրացման մասը ուժեղացված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է, բոլոր մետաղական դետալները ամրացվածեն եռակցման միջոցով և բոլոր եռակված մասերը կլինեն հղկված: Աղբամանը ունի 3 անցք գետնին ամրացնելու համար: Աղբամանները կունենան առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում: Աղբամանները մատակարարվում են փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: Նկարները կցվում են:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՏԵԽՆԸ ՍԻԹԻ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԶ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|------------|-------------------------------|----------------------------|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |